ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 30 >> հունիս 2013թվականի N 55 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և 29-րդ հոդվածի 4-րդ կետով , «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 5-րդ և 6-րդ մասերի դրույթներով, **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին» N 198-Ն որոշմամբ հաստատված 2-րդ,3-րդ և 6-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշմանը կից՝ համապատասխանաբար NN 1-3 հավելվածների:

2. Գյումրի համայնքի 2013թ. Վարչական բյուջեի պահուստաֆոնդի 3-րդ եռամսյակի նախատեսված 53775.0 (հիսուներեք միլիոն յոթ հարյուր յոթանասունհինգ) հազար ՀՀ դրամը ուղղել 3-րդ եռամսակի ֆոնդային բյուջեով հաստատված գործառական և տնտեսագիտական դասակարգման ուղղություններին՝ համաձայն հավելված 4-ի:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին կատարել համապատասխան փոփոխությունները:

Կողմ (11) **Դեմ(0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Տ.Հովհաննիսյան_____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ